# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

## ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐ՝ «ԷՕՌՆԵԿՅԱՆ» ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 3-ին «Փրութփուլ Արմենիա» հիմնադրամը «ՆՈՒՌ» (Նոր ուսումնական ռազմավարություն) ծրագրի շրջանակներում XO համակարգիչներ բաժանեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էօռնեկյան» հանրակրթական դպրոցի տարրական դասարանների աշակերտներին եւ ուսուցիչներին, որով Հայաստանում մեկնարկեց արգենտինահայ բարերար Էդուարդո Էօռնեկյանի նախաձեռնած ծրագիրը:

Միջոցառումը բացվեց «Էօռնեկյան» հանրակրթական դպրոցի տնօրեն Յուրի Ջիլավյանի երախտագիտության խոսքով: Այնուհետեւ ներկաներին շնորհավորանքի խոսք ուղղեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը՝ անդրադառնալով ծրագրի կարեւորությանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու գնահատանքը ծրագրի կազմակերպիչներին փոխանցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը: Սրբազանն իր խոսքում ընդգծեց, որ ծրագիրը հնարավորություն է ընձեռում կազմակերպել կրթական գործընթացը ժամանակի պահանջներին համահունչ՝ թույլ տալով աշակերտներին զարգացնել համակարգչային գիտելիքները եւ այդ ճանապարհով լինել առավել տեղեկացված:

Ծրագրի մեկնարկի առիթով աշակերտներին, ծնողներին եւ ուսուցիչներին շնորհավորեց նաեւ «Փրութփուլ Արմենիա» հիմնադրամի գլխավոր գործադիր տնօրեն Աննա Քրիստինա Շիրինյանը՝ հույս հայտնելով, որ բաշխված համակարգիչները կնպաստեն ուսման մակարդակի բարձրացմանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՎԵՐԱՕԾՎԵՑ ՉԿԱԼՈՎ ԳՅՈՒՂԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի Չկալով գյուղի 1862 թ. վերակառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցին, որն իրենից ներկայացնում է երկթեք կտուրով միա-

նավ եկեղեցի, ժամանակի եւ բնական ազդեցությունների հետեւանքով ֆիզիկապես մաշվել եւ քայքայվել էր: Կղմինդրով եւ ազբոշիֆերներով կառուցված տանիքի որոշ հատվածներում առաջացել էին բացվածքներ եւ անցքեր, որոնցից անձրեւաջրերը ներս էին թափանցում, քայքայում պատերը, ողողում եկեղեցու սրահը:

Արձագանքելով գյուղի բնակչության խնդրանքին՝ եկեղեցու փլուզումը կանխելու եւ սրբազան արարողություններ կատարելու նպատակով, Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանի օրհնությամբ՝ ԱԺ պատգամավոր Կարեն Սարիբեկյանը անձամբ նախաձեռնեց եկեղեցու վերակառուցման հովանավորությունն ու ղեկավարեց աշխատանքները՝ հիմնովին փոխվեց ծածկը, ամրակայվեցին հիմնապատերը, կառուցվեց խորանն ու Սուրբ Սեղանը, կատարվեցին տարածքի հսկայածավալ մաքրման աշխատանքներ, սալապատվեց, պարսպապատվեց եկեղեցու եւ դպրոցի շրջապատը, եկեղեցուն կից վերակառուցվեց հովվատունը, քանդակազարդ շքեղ դուռը առանձնահատուկ փեսք հաղորդեց եկեղեցուն: Իրականացվեցին ներքին հարդարման, կահավորման եւ տարածքի բարեկարգման աշխատանքները: Նույն թվականի հուլիսի 4-ին, ձեռամբ թեմակալ առաջնորդի, օծվեց եւ տանիքին տեղադրվեց եկեղեցու բարձրադիր խաչը:

Նոյեմբերի 20-ին ձեռամբ թեմակալ առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանի կատարվեց Սուրբ Աստվածածին եկեղեցու վերաօծման արարողությունը: Վերաօծման արարողությանը մասնակցեցին Վանաձորի հոգեւոր հովիվներ Տ. Վահան եւ Տ. Օհան քահանա հայրերը: Դապարագիչն էր Տ. Օհան ավագ քահանա Լուսարարյանը: Արարողությանը ներկա էին Լոռու փոխմարզպետը,պատգամավորներ, Կարեն Սարիբեկյանի զինակից ընկերները, հյուրեր Երեւանից, բազմաթիվ ուխտավորներ, Չկալովի գյուղապետը, համայնքապետերը, գյուղի դպրոցի ուսուցչական կազմը, աշակերտներ, հավատացյալներ: Արարողության ավարտին Սրբազան Հայրը օրհնեց բարերար Կարեն Սարիբեկյանին, գյուղի բնակիչներին եւ բոլոր ներկաներին՝ շնորհավորելով աղոթավայրի վերաօծման առիթով, եւ առ ի երախտագիտություն Օրհնության գիր հանձնեց բարերարին՝ նվիրեց մեր Տիրոջ Պայծառակերպության խորհուրդը պատկերող մանրանկար:

Սրբազան Հայրը շնորհակալական խոսք ասաց նաեւ եկեղեցուն սրբապատկերներ եւ գորգեր նվիրաբերած Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանին, Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանին, Լոռու մարզի ոստիկանապետ Անուբախ Համբարյանին, Լոռու մարզի փոխմարզպետ Արսեն Դարբինյանին, Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Արմեն Ջանազյանին ու կրթության վարչության պետ Մինաս Սայադյանին:

Հավարտ սրբազան արարողության՝ ներկաներին մատուցվեց երախտիքի ու գոհության մատաղ:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ



Շքանշանի հանձնում

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 5-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեկնարկեց «Անցյալի պահպանություն՝ հանուն ապագայի» խորագրով Հայկական գրադարանների միջազգային երկրորդ համաժողովը, որը կազմակերպվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու ՀՀ մշակույթի նախարարության համատեղ ջանքերով: Համաժողովին մասնակցում են Հայաստանի և Սփյուռքի, ինչպես նաև Հայ Եկեղեցու Նվիրապետական աթոռների ներկայացուցիչներ:

Մայր Աթոռում համաժողովը նախագահում էր գերաշնորհ Տ. Հովնան եպս. Հակոբյանը:

Համաժողովի կազմկոմիտեում Մայր Աթոռը ներկայացնում էր Մայր Աթոռի Դաշտոնական մամուլի բաժնի տեխնիկական խմբագիր արժանապատիվ Տ. Արարատ քհն. Պողոսյանը, ով համաժողովի բացման խոսքն ասելուց հետո հրավիրեց գերաշնորհ Տ. Հովակիմ եպս. Մանուկյանին ընթերցելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ կոնդակը՝ գրված գրատպության 500-ամյակի առիթով:

Վեհափառ Հայրապետի Սրբատառ կոնդակի ընթերցումից հետո ներկաներին ողջունեց ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը:

Նույն օրը համաժողովի մասնակիցներին ընդունեց և իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ բարի արդյունքներ մաղթելով համաժողովի աշխատանքներին: Նորին Սրբությունը կարևորեց միջգրադարանային համագործակցությունը, որի շրջանակներում ծրագրվում է հայագիտական գրականության շտեմարանի ստեղծում: Իր խոսքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքներին՝ նշելով, որ առաջիկային Մայր Աթոռում բացվող մատենադարանն իր ժամանակակից հնարավորություններով լավագույնս կծառայի հայագիտության և աստվածաբանական գիտությունների զարգացմանը:

Հանդիպման ընթացքում տեղի ունեցավ նաև շքանշանի հանձնման արարողություն: Ազգային-եկեղեցական և գիտական բեղուն գործունեության համար Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշան շնորհվեց համաժողովի մասնակից Տ. Ներսես ավագ քահանա Ներսեսյանին (Մեծ Բրիտանիայի հայոց թեմ):

Հայրապետական կոնդակն ընթերցեց Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը: Կոնդակում մասնավորապես ասված է. «Տերունապատվեր Ձեր սպասավորությունը Դուք իրականացրել եք Մեծ Բրիտանիայի Հայոց թեմում՝ հոգևոր սնունդ մատուցելով մեր Եկեղեցու բարեպաշտ զավակներին: Երջանկահիշատակ Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Դուք Ձեր ուսումնառութ-

յունն ամբողջացրեցիք Լոնդոնի հեղինակավոր Քինգս Քոլեջ համալսարանում՝ արժանանալով Աստվածաբանության բակալավրի և Փիլիսոփայության դոկտորի պատվավոր կոչումներին: Վաստակաշատ եկեղեցականիդ գործունեության երկարամյա փաթիներն արդյունավորվել են Բրիտանական գրադարանի Քրիստոնեական Արևելքի բաժանմունքի տնօրենի պատասխանատու պաշտոնում: Դուք խնամք եք տարել մեր հոգևոր-մշակութային սրբազան արժեքների պահպանությանը և կարևոր նպաստ բերել հրապարակությանց ու ցուցահանդեսների միջոցով հայ մշակույթը աշխարհին առավել ճանաչելի դարձնելու գործում:

Մասնավոր գոհունակության առիթ է Մեզ համար հաստատել, որ բեղուն է եղել նաև Ձեր գրիչը՝ նորանոր ակունքներ բխեցնելով հավատացյալ հայորդյաց կրոնական գիտելյաց զորացման համար: Այսօր Ձեր հեղինակությամբ ընթերցողի սեղանին են արժեքավոր ուսումնասիրություններ, որ արդյունքն են բազում տարիների Ձեր նվիրյալ և անհոգնաբեկ աշխատանքի: Ձեր գիտական գործունեության արգասիքները ամբարվում են Մեր հավատավոր զավակների հավատքը, համալրում իմացության պաշարը»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Ներսես ավագ քահանային հանձնեց «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշանը՝ մաղթելով երկար տարիների արևշատություն և նորանոր գիտական ձեռքբերումներ:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը պատասխանեց համաժողովի մասնակիցներին հետաքրքրող հարցերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԲԱՆԱՁԵՒ

2012 թ. Հայ գրատպության 500-ամյակի և «Երևանը 2012 թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպվեց և 2012 թ. հոկտեմբերի 5-6-ը անցկացվեց «Անցյալի պահպանություն՝ հանուն ապագայի» հայկական գրադարանների միջազգային երկրորդ համաժողովը: Երկօրյա համաժողովի մասնակիցները ձևավորեցին գործադիր մարմին հետևյալ կազմով.

**Տեր Արարատ քահանա Պողոսյան** - Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական ամսոյի բաժնի տեխնիկական խմբագիր,

**Տեր Ասողիկ քահանա Կարապետյան** - Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ձեռագրատան, արխիվի և թանգարանների տնօրեն,

**Տիգրան Զարգարյան**- Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն,

**Տիրայր արքեպիսկոպոս Փանոսյան** - Լիբանան, Անթիլիաս, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության մատենադարանի տեսուչ,

**Տեր Ներսես ավագ քահանա Ներսեսյան** - Մեծ Բրիտանիա, Լոնդոնի Ս. Եղիշե եկեղեցու հոգևոր հովիվ,





Հայկական գրադարանների միջազգային երկրորդ համագումար

**Արա Ղազարյանց** - ԱՄՆ, Բոստոն, Հայ մշակութային հիմնարկության տնօրեն,

**Փիթեր Քաուի** - ԱՄՆ, Լոս Անջելես, Կալիֆոռնիայի համալսարանի Նարեկացու անվ. հայագիտության ամբիոնի վարիչ,

**Միհրան Մինասյան** - Սիրիա, Հալեպ,

**Ռոբեր Տեր-Մերկերյան** - Ֆրանսիա, Մարսել,

**Անդրանիկ Տագիսյան** - Լիբանան, Բեյրութ, Հայկազյան համալսարանի հայկական սփյուռքի ուսումնասիրման կենտրոնի տնօրեն,

**Դավիթ Ղազարյան** - ՀՀ, Մատենադարան-Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ,

**Կարո Մինասյան** - ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի տնօրեն:

Համաժողովն արձանագրեց դրական տեղաշարժերը, որ տեղի են ունեցել հայկական գրադարանների առաջին համաժողովից հետո, արձանագրեց, որ գրադարանային հավաքածուների թվայնացման ուղղությամբ կատարվել է զգալի աշխատանք. ձեւավորվել է.

ա. հայերեն հնատիպ գրքի համահավաք շտեմարանը,

բ. Հայաստանի գրադարանների համահավաք էլեկտրոնային գրացուցակը,

գ. հայկական գիտատեղեկատվական հանգույցը: Դրանք առ 2012 թ. հոկտեմբերի 1 պարունակում են 800.000-ից ավելի գրառում եւ 500.000-ից ավելի թվայնացված էջ:

Թվայնացված նյութերը հասանելի են **www.nla.am** եւ **www.flib.sci.am** կայքերում:

Գործադիր մարմինը կմշակի համագումարի կանոնադրությունը եւ մինչեւ 2013 թ. մարտի 1-ը կներկայացնի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ու ՀՀ մշակույթի նախարարություն:

Համաժողովը որոշեց գրադարանավարների համահայկական համաժողով հրավիրել երկամյա պարբերականությամբ, Թարգմանչաց տոնին՝ հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը:

Գրադարանային գործի առաջընթացն ապահովելու, ժամանակակից մարտահրավերների պայմաններում գրադարանների աշխատանքն առավել արդյունավետ դարձնելու նպատակով համաժողովը որոշեց.

1. ՀՀ մշակույթի նախարարությանը կից գրադարանների խորհրդի կազմում ընդգրկել Սփյուռքի գրադարանների ներկայացուցիչներին, որոնց հետ կապ կպահպանվի նաեւ հեռահաղորդակցման միջոցով,

2. Հայաստանի ազգային գրադարանին հանձնարարել ստեղծել էլեկտրոնային գրանցահամակարգ, որտեղ կգրանցվեն Հայաստանի Հանրապետության եւ արտերկրի հայկական գրադարանները եւ հայագիտական հաստատությունները,

3. Սփյուռքի գրադարանների պատասխանատուների մասնագիտական մակարդակը բարձրացնելու նպատակով Հայաստանի ազգային գրադարանում տարին մեկ անգամ կազմակերպել եւ անցկացնել «Վարպետաց դասեր» Հանձնարարել Հայաստանի ազգային գրադարանի տնօրենին կազմելու ուսուցողական դասընթացների բյուջեն եւ դասավանդվող առարկաների համառոտ նկարագրությունը,

4. Դիմել ՀՀ մշակույթի նախարարությանը ապահովելու «Վարպետաց դասերի» անցկացման ֆինանսական աջակցությունը,

5. ՀՀ կառավարության հատուկ ուշադրությունը հրավիրել Սփյուռքում առկա և ազգային մտավոր ժառանգության մաս կազմող՝ վտանգված, լքյալ, անուշադրության մատնված հավաքածուների և գրադարանների վրա,

6. Անհրաժեշտության դեպքում Հայաստանի ազգային գրադարանից համապատասխան մասնագետներ գործուղել Սփյուռքի գրադարաններ՝ տեղերում մեթոդական օգնություն կազմակերպելու համար,

7. Խթանել ՀՀ և Սփյուռքի գրադարանների միջև գրքափոխանակության աշխուժացումը՝ դրանում կարևորելով ինչպես ՀՀ մշակույթի, սփյուռքի, արտաքին գործերի նախարարությունների պատասխանատուների, այնպես և կրոնական կառույցների՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու, Հայ Կաթողիկե եկեղեցու և Հայ Ավետարանական եկեղեցու շահագրգիռ մասնակցությունը,

8. Առաջարկել ՀՀ մշակույթի նախարարությանը «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքում կետ մտցնել արտերկրից պետական գրադարաններին նվիրաբերվող և համալրման տրվող գրքերը հարկերից և տուրքերից ազատելու ուղղությամբ,

9. Դիմել ՀՀ մշակույթի նախարարությանը՝ ֆինանսավորելու արտերկրի գրադարաններին և հաստատություններին՝ հնատիպ ու հազվագյուտ գրքերի և պարբերական մամուլի թվայնացման գործընթացը տեղերում կազմակերպելու,

10. Հայաստանի ազգային գրադարանին հանձնարարել ապահովել հայ հնատիպ գրքի և հայ պարբերական մամուլի գրադարանային համահավաք շտեմարանի ձևավորման և հանրայնացման աշխատանքները,

11. Ստեղծել պետական հաստատություններում առկա, ինչպես նաև մասնավոր հավաքածուներ հայտնաբերող, ուսումնասիրող և դրանք շրջանառության մեջ դնող հանձնախումբ,

12. Մասնակից հաստատություններին հանձնարարել մշակել Ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ միջոցառումների հստակ ծրագիր՝ 2014 թ. գրադարանավարների 3-րդ համաժողովին ներկայացնելու համար,

13. Սոցիալական ցանցերում տեսանելի դարձնել համաժողովի աշխատանքները:

Համաժողովն իր մտահոգությունն է հայտնում հրապարակվող գրականության բովանդակության առնչությամբ և հորդորում է պատկան մարմիններին.

ա. ուժեղացնել վերահսկողական լծակները՝ կանխելու մատաղ սերնդի հոգին ու միտքը խեղող գրքերի հրապարակությունը,

բ. խրախուսել ազգային նկարագրի ձևավորմանն ու կերտմանը միտված գրքերի հրապարակությունները:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵՑ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՔԱՂԱՔԻ ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վաղարշապատում մասնակցեց քաղաքի տոնի առիթով հրավիրված «Համաշխարհային ժառանգության քաղաքներ» կազմակերպության փնօրենների խորհրդի նիստի բացմանը եւ հայրապետական իր պատգամը, օրհնությունն ու շնորհավորանքները բերեց ներկաներին:

«Այսօր ուրախություն ենք ապրում ամենքս, քանզի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով պսակյալ մեր օրհնյալ քաղաքի փառատոնն ենք տոնում: Նվիրական են հիշատակները պատմական այս քաղաքի: Այստեղ է երկնի վերին խորաններից հրաշափառ կերպով իջել հարուցյալ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, եւ Սուրբ Գրիգոր Լուսավորիչն այս վայրում է ունեցել իր լուսեղեն տեսիլքը: Այստեղ է մեր ժողովուրդը դիմավորել հայոց աստվածատուր գրերը իր մտքի հիասքանչ հանճարով երկնած՝ Հայաստան վերադարձող Սուրբ Մեսրոպ Մաշտոցին: Հոգեւոր եւ մտավոր մեր զարթոնքն ու ծաղկումը սկսվել են Վաղարշապատ-Էջմիածին աստվածօրհնյալ քաղաքից, որի պատմական անցյալը լուսավորվել է քրիստոնեական արշալույսի նոր հորիզոններով: Այստեղ են համախմբվել մեր երանելի կաթողիկոսներն ու հայոց թագավորները հավատացյալ ժողովրդի հետ միասին, ուրախացել մեր ազգային եւ հոգեւոր տոներով, համախումբ աղոթք բարձրացրել առ Երկնավորը: Այստեղից են ղողանջել կոչնակ զանգերը նաեւ հայրենյաց պաշտպանության՝ Ավարայրից Սարդարապատ, այո, նաեւ՝ Արցախ:

Դարեր շարունակ Հայոց մեծ աշխարհի տարբեր կողմերից, այնուհետ նաեւ ողջ աշխարհասփյուռ եզերքներից այս քաղաք են ուխտավորաբար այցելել եւ այցելում բազում հայորդիներ եւ ուխտավոր հյուրեր՝ խոնարհվելու մեր նվիրական սրբություններին, տեսնելու Էջմիածինը, որը պատմության հոլովույթներում փարոսի պես լույս սփռող իր Մայր Աթոռով այսօր եւս շարունակում է լինել նվիրական քաղաք: Սուրբ Էջմիածինը հավատքի վեմն ու սրբազան կենտրոնն է համայն հայ ժողովրդի: «Այս սրբավայրում՝ Իջման Սուրբ Տեղում է զարնվում հայ ժողովրդի սիրտը: Սիրիր Էջմիածինը, ներս մտիր, համբուիր Իջման Սուրբ Խորանը, եւ դու համբուրած կլինես ամբողջ աշխարհով մեկ սփռված ողջ տարագիր ազգիս»,- գրում է Պերճ Պռոշյանը», - նշեց Վեհափառ Հայրապետը:

Խոսքն ուղղելով վաղարշապատցիներին՝ Նորին Սրբությունը նկատեց, որ պատիվ ու նաեւ պատասխանատվություն է լինել բնակիչը այս քաղաքի: «Էջմիածնաբնակ Մեր զավակները մշտապես առանձնահատուկ կերպով վկայել են իրենց մեծագույն սերը, որ ունեն հանդեպ լուսավորչահաստատ Մայր Աթոռը մեր Սուրբ Եկեղեցու: Այս իմաստով նաեւ յուրաքանչյուր հայ էջմիածինցի է Սուրբ Էջմիածնին իր պատկանելությամբ, մեր նվիրական հոգեւոր կենտրոնի հանդեպ որդիական ջերմ սիրո եւ անխախտ հավատարմության վկայությամբ: Մեր ժողովուրդը միշտ հավատացել է, որ Սուրբ Էջմիածնի լույ-

որ անմար է եւ շարունակելու է պայծառ շողարձակումով Աստծո օրհնությունը բաշխել սիրասուն իր զավակներին՝ հաղթահարելու ամեն փորձություն ու նեղություն, կերտելու բարօր ու պայծառ կյանք, իրականություն դարձնելու ազնիվ ու արդար երազները հայ ժողովրդի»,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը՝ հորդորելով նորոգվել Էջմիածնի սիրով, ապրել աստվածահաճո ընթացքով, միասնաբար խնամել եւ ծաղկեցնել քաղաքը, պահպանել հայ ժողովրդի նվիրական ու դարավոր սրբությունները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր գնահատանքը հայտնեց քաղաքի իշխանություններին իրենց աշխատանքի եւ գործունեության համար՝ ի խնդիր Վաղարշապատ քաղաքի առաջընթացի ու բարօրության:

Հանդիսավոր նիստից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը՝ ուղեկցությամբ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի եւ Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանի եւ այլ պաշտոնապար անձանց, ծաղիկներ դրեցին Արցախի հերոսամարտի հուշարձանին՝ հարգանքի տուրք մատուցելով զոհված հայորդիների հիշատակին, ինչպես նաեւ ներկա գտնվեցին Մակար Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի բացման արարողությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻ ՀԲԸՄ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Նոկտեմբերի 7-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բուենոս Այրեսի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության տիկնանց միության անդամներին՝ ուղեկցությամբ ՀԲԸՄ պատվավոր անդամ Հարություն Սարաֆյանի:

Հանդիպմանը պ. Սարաֆյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց միության գործունեությունը եւ Արգենտինայի հայոց թեմին միության անդամների կողմից ցուցաբերվող զորակցությունը:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը արգենտինահայ համայնքի ներկայացուցիչներին բարի գալուստ մաղթեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Անդրադառնալով Արգենտինայի հայոց թեմին եւ համայնքին՝ Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդգծեց, որ արգենտինահայ համայնքն ամենակազմակերպված, հայաշունչ եւ օրինակելի գաղթօջախներից մեկն է: Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձր գնահատեց թեմական կյանքի աշխուժացմանն ուղղած ձեռնարկներն ու միջոցառումները՝ ներկաներին հորդորելով մասնավոր ուշադրություն դարձնել երիտասարդ սերնդին, նրանց կրթել ու դաստիարակել հայրենասիրության եւ եկեղեցասիրության ոգով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԻՐԻԱՀԱՅ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 7-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սիրիայի Արաբական Հանրապետության Հայ Բարեգործական Ընդհանուր Միության անդամներին եւ Հալեպի Կիլիկյան վարժարանի հոգաբարձուներին՝ ուղեկցությամբ Դամասկոսի հայոց թեմի քաղաքական ժողովի ատենապետ, ՀԲԸՄ կենտրոնական վարչական ժողովի անդամ, Միջին Արեւելքի եւ Հայաստանի ծրագրերի պատասխանատու Վազգեն Յակուբյանի:

Հանդիպման ընթացքում պ. Յակուբյանն անդրադարձավ Սիրիայում տիրող կացությանը եւ ներկայացրեց սիրիահայերին օժանդակելու նպատակով ստեղծված հատուկ հանձնախմբի աշխատանքները:

Ողջունելով եւ հայրապետական իր օրհնությունը բերելով սիրիահայ ուխտավորներին՝ Վեհափառ Հայրապետն իր մտահոգությունն արտահայտեց Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունների, ի մասնավորի՝ սիրիահայ համայնքի ծանր կացության առիթով: Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավով արձանագրեց, որ պատմության ընթացքում Սիրիայում հայ ժողովրդի զավակների ջանքերով կերտված մշակույթն ու ժառանգությունը, հոգեւոր-ազգային արժեքներն այսօր վտանգված են:

Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց ՀԲԸՄ ներկայացուցիչներին եւ բոլոր այն ազգային հաստատությունների անդամներին, ովքեր այս դժվարին իրավիճակում հաստատուն կերպով կանգնած են Սիրիայի հայ համայնքի կողքին եւ ջանք չեն խնայում հայ ժողովրդի զավակների հոգսը թեթեւացնելու եւ օգնության ձեռք մեկնելու համար:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ Տերը խաղաղություն հաստատի Սիրիայիում, որպեսզի Սիրիայի ժողովուրդը, որի անբաժանելի մասն է հայ համայնքը, կարողանա վերադառնալ իր բնականոն լիարժեք կյանքին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎԻՆ

Հռոմի Սրբազան քահանայապետ Բենեդիկտոս ԺԶ. Պապի նախագահությամբ հոկտեմբերի 7-ից Վատիկանում սկսվեց Կաթոլիկ Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովը՝ «Նոր ավետարանչություն՝ հանուն քրիստոնեական հավատքի տարածման եւ ամրապնդման» թեմայով:

Երեքշաբթյա ժողովին մասնակցելու համար Վատիկան էին ժամանել Կաթոլիկ Եկեղեցու ողջ եպիսկոպոսաց դասը, ինչպես նաև ներկայացուցիչներ Ուղղափառ և Արևելյան Ուղղափառ, Անգլիկան եկեղեցիներից, էկումենիկ կազմակերպություններից ու Արևմուտքի քրիստոնեական այլ հարանվանություններից:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժողովին մասնակցում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր կրթական հաստատությունների վերատեսուչ և Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Գևորգ եպիսկոպոս Սարոյանը: Ժողովին Սրբազան Հայրը հանդես եկավ ելույթով, Նորին Սրբություն Բենեդիկտոս ԺԶ. Պապին փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետի եղբայրական ողջույնները:

Վատիկանում գտնվելու օրերին Գևորգ Սրբազանը նաև հանդիպումներ ունեցավ Վատիկանի պետքարտուղար կարդինալ Տարչիսիո Բերտոնեի և Հռոմի Արևելյան Եկեղեցիների բաժանմունքի վարիչ կարդինալ Լեոնարդո Սանդրիի, ինչպես նաև Կաթոլիկ Եկեղեցու կրթական մի շարք հաստատությունների պատասխանատուների հետ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում` Գևորգյան հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու շքանշանների հանձնման արարողություն: Հայրենիքին, Եկեղեցուն և ժողովրդին մատուցած ծառայությունների և վաստակի համար Հայ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշաններ շնորհվեցին Սաբիր Ստեփանյանին և Մանուկ Վարդանյանին:

Արարողության ընթացքում մեծարյալների կյանքին և ազգօգուտ գործունեությանն անդրադարձան ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Ընդերքի տրամադրման գործակալության պետ Կորյուն Հակոբյանը և դոկտոր-պրոֆեսոր Աղավարդ Խաչատրյանը:

Այնուհետև «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո բերվեցին Հայրապետական սրբատառ կոնդակները, որոնք ընթերցեցին Մայր Աթոռի միաբաններ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը և Տ. Մուշեղ եպիկոպոս Բաբայանը:

Սաբիր Ստեփանյանին ուղղված կոնդակում մասնավորապես նշված է. «...Աստվածպարգև Ձեր կյանքը Դուք, որպես նվիրյալ հայորդի, ապրել եք Հայրենի մեր երկրի հանդեպ որդիական սիրով` միշտ ձգտելով Տիրոջից Ձեզ պարգևված շնորհները ծառայեցնել հավատավոր մեր ժողովրդին: Դուք բազմաթիվ պատասխանատու պաշտոններ ստանձնեցիք Խորհրդային տարիներին` նվիրյալ ջանքեր բերելով Հայաստանի տնտե-

սության տարբեր ճյուղերի առաջընթացին: Անկախությունից հետո շարունակեցիք անն-վազ նախանձախնդրությամբ Ձեր կարողություններն ու հարուստ փորձառությունը ի սպաս դնել Հայրենիքի զորացման ու պայծառության սուրբ գործին: ...Սիրելի պրն. Ստեփանյան, Ձեզ հետ Մեր տասնամյակների բարեկամության ընթացքին Մենք մշտա-պես զգացել ենք Ձեր ջերմ սերն ու նվիրումը՝ հանդեպ մեր Սուրբ Եկեղեցին եւ հոգեւոր մեր սրբազան կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը»:

Տիար Մանուկ Վարդանյանին ուղղված հայրապետական կոնդակում ասված է. «... Երկար տարիներ զբաղեցնելով պետական բարձր պաշտոններ՝ Դուք Ձեր կարողութ-յուններն ու փորձառությունը ի սպաս եք բերում մեր երկրի շինությանն ու պայծառությա-նը: Ձեր աշխատանքի մեջ արձանագրված հաջողություններն արդյունքն են Ձեր աստ-վածասեր ու հայրենասեր ոգու եւ բարեխիղճ, նախանձախնդիր ծառայության:

Գոհունակություն է Մեզ համար անդրադառնալ նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիած-նին մատուցած Ձեր ծառայություններին: ...Մենք փառք ենք մատուցում Ամենախնամ Բարձրյալին, որ Ձեզ պես հավատավոր Մեր զավակները շարունակում են եկեղեցան-վեր իրագործումներով առավել զորացնել ու պայծառացնել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին»:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը պատվո շքանշանները հանձնեց Սաքիր Ստե-փանյանին ու Վարդան Մանուկյանին, ովքեր, իրենց հերթին, շնորհակալություն հայտ-նեցին Նորին Սրբությանը հայրապետական բարձր գնահատանքի համար:

Հանդիսությունն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Նորին Սրբությունը, վերստին շնորհավորելով շքանշանակիրներին, անդրադարձավ նրանց նվիրյալ ու ազգօգուտ գործունեությանը եւ մաղթեց, որ Բարին Աստված Իր հանապազ օրհնության ներքո միշտ քաջառողջ ու երջանիկ պահի նրանց՝ առաջնորդելով եկեղեցա-շեն ու հայրենանվեր նորանոր իրագործումների:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԲՐՇ. ՀՐԱՆԴ ՍՐԿ. ԿԻՒԼԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԵՑԱՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿՈՎ ԵՒ Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնոր-դարանի կազմակերպութեամբ եւ Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսա-մեանի նախագահութեամբ՝ մեծարանքի հանդիսութիւն մը կազմակերպուեցաւ ի պատիւ Բրշ. Հրանդ Սրկ. Կիւլեանի՝ Ամենայն Հայոց Սրբազանգոյն Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի կողմէ իրեն շնորհուած Հայրապետական Կոնդակին եւ Ս. Ներսէս Շնոր-հալի շքանշանին պսակութեան առիթով:

Հանդիսութիւնը պտեղի ունեցաւ Ուրբաթ Նոյեմբեր 5, 2012, երեկոյեան ժամը 6:30-էն սկսեալ Փէրլըն Նիւ Ճըրզիի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ Ապաճեան սրահին մէջ:

Մեծարեալը յարգող եւ գնահատող մօտ 400 ազգայիններ ներկայ գտնուեցան այս ձեռնարկին՝ գլխաւորութեամբ Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանի, Կ. Պոլսոյ Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ Գերշ. Տ. Արամ Արք. Աթէշեանի, բարձրաստիճան եկեղեցականներու, ազգային բարերարներու, Պոլիսէն եւ Տիզրանակերտէն եկած ներկայացուցիչներու, կրթական մշակներու եւ բարեկամներու:

Հրանդ Սարկաւագի եկեղեցանուէր, ազգանուէր եւ կրթանուէր գործունէութեան, ինչպէս նաեւ անոր կատարած նիւթական օժանդակութեանց դաշտը շատ ընդարձակ է. ան անդամ է Վարդանանց Ասպետներու Եղբայրակցութեան եւ գլխաւոր կազմակերպիչը Մեծ Եղեռնի ամէնամեայ ոգեկոչման հանդիսութեան Նիւ Եորք քաղաքի կեդրոնը գտնուող «Թայմզ Սքուէր» հրապարակին վրայ՝ մասնակցութեամբ հայկական կազմակերպութիւններու եւ ամերիկեան կառավարական ծանօթ դէմքերու: Ան անդամ է Հայ Ոսկերիչներու Կազմակերպութեան, Առաջնորդարանի Կոմիտաս Երգչախումբին, Ղարաբաղի Յանձնախումբին, Ամենայն Հայոց Հայրապետի այցելութեան Կարգադիր Յանձնախումբին եւ Տիզրանակերտի Ս. Կիրակոս Եկեղեցւոյ վերակառուցման եւ վերաօծման առիթով կազմուած Ուխտագնացութեան Յանձնախումբին: Իր գործօն մասնակցութիւնը բերած է Ամերիկայի Արեւելեան Թեմի հաստատման 100-ամեակի եւ Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը պետական կրօնք հռչակման 1700-ամեակի Յանձնախումբերուն: Հրանդ Սարկաւագ, որ հիմնադիրն ու նախագահն է Նիւ Ճըրզի Նահանգի «Հայ-Ամերիկեան Օժանդակութեան եւ Կրթութեան Կեդրոն»ին՝ ՀԱՅ ՏՕՒՆին, ամէն առիթով իր օգտակար մասնակցութիւնը բերած է Հ.Բ.Ը.Միութեան նախաձեռնութիւններուն: Որպէս Սարկաւագ՝ ան իր ծառայութիւնը ի սպաս կը դնէ Փէրլըն Նիւ Ճըրզիի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ եւ Նիւ Եորքի Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ:

Հանդիսութիւնը սկիզբ առաւ Անի Ճըրճըրեանի ամերիկեան եւ հայկական օրհներգներու կատարումով: Բացման աղօթքը կատարեց Թեմական Պատուիրակ Գերշ. Տ. Վիգէն Արք. Այգազեան: Օրուան հանդիսավարներն էին Տիկ. Քարէն Նարկիզեան եւ Տիար Վարդան Ապրօ:

Բաժակաճառը արտասանեց Տիար Հարի Թուֆայեան: Տէր եւ Տիկին Թուֆայեանները օրուան պատուոյ ատենապետներն էին:

Առաջին խօսողը եղաւ Կ. Պոլսոյ Աթոռի Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ Գերշ. Տ. Արան Արք. Աթէշեան, որ գլխաւորաբար արտայայտուեցաւ Հրանդ Կիւլեանի Պոլսոյ եւ Տիզրանակերտի հետ ունեցած կապերուն եւ կատարած օժանդակութեանց մասին:

Ծանօթ դաշնակահարուհի Սոֆիա Մելիքեան նուագեց երաժշտական երկու կտորներ:

Օրուան գլխաւոր խօսողն էր Տոքթ. Մերի Փափազեան, որ նորանշանակ նախագահուհին է Հարաւային Գընէթիքէթի Պետական Համալսարանին: Տոքթ. Փափազեան

մանրամասնութեամբ ներկայացուց Հրանդ Կիլեանի բեղուն գործունէութիւնը թէ ազգային, թէ կրթական, թէ կազմակերպչական եւ թէ բարեսիրական մարզերու մէջ:

Ներկաներուն համար անակնկալ եղան Հայաստանի Հանրապետութեան ՄԱԿ-ի մօտ մնայուն եւ լիազօր Դեսպան Տիար Կարէն Նազարեանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ներկայացուցիչ Տիար Ռապըրթ Աւետիսեանի ելոյթներ, որոնք յաջորդաբար Հրանդ Կիլեանի լամբակը զարդարեցին Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան Նախարարութեան յուշամետալով եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան 20-ամեակի Երախտագիտութեան մետալով:

Ապա, սրահին մէջ զետեղուած մեծ պաստառին վրայ ցուցադրուեցաւ Կիլեան ամոլի զաւակներուն Անուշի եւ Հայկի կողմէ պատրաստուած ժապաւէն մը, ուր իրենց շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները ներկայացուցին Վարդանանց Ասպետներու Եղբայրակցութեան նախկին աւագ սպարապետներ եւ ընտանիքի բարեկամներ:

Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան փոխանց իր պատգամը, ուր ի մէջ այլոց ըսաւ. «Այսօր մենք կը պատուենք Հրանդ Կիլեանը իր սրտի ու հոգիի ազնուութեան համար: Այդ է պատճառը որ Հրանդ սիրուած է բազմաթիւ անհատներէ եւ փոխադարձաբար սիրած է զանոնք: . . . Հակառակ անոր որ Հրանդը անդամ է Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ՝ կարելի է զինք տեսնել շրջանի բոլոր եկեղեցիներուն մէջ, ինչպէս նաեւ Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ: Հրանդը կարելի է տեսնել այնտեղ, ինչպէս եկեղեցի, կրթական եւ մշակութային հաստատութիւններ, բարեսիրական միութիւններ եւ ազգային կազմակերպութիւններ, ուրկէ որ խնդրանք ներկայացուած է իրեն. ան երբեք «ոչ» չէ ըսած եւ իր մասնակցութիւնն ու օժանդակութիւնը ի սպաս դրած է բոլորին: Եւ այդ բոլոր միջավայրերուն մէջ ան իր «տան» մէջ զգացած է: . . . Հրանդը յոյժ է բազմաթիւ անհատներու եւ ընտանիքներու: . . . Ուրախ եմ որ Տէրը Հրանդին շնորհած է կեանքի կապարեւ ընկեր մը՝ Րուպին, եւ անոնք բախտաւորուած են երկու զաւակներով՝ Անուշ եւ Հայկ, որոնց փոխանցած են իրենց սէրը, խանդավառութիւնը եւ նուիրումի ոգին»:

Իր պատգամի աւարտին՝ Սրբազան Հայրը բեմ հրաւիրեց Հրանդն ու Րուպին, ինչպէս նաեւ Պուլկարիոյ Հայոց Թեմի առաջնորդական տեղապահ Հոգշ. Տ. Արզար Վրդ. Յովակիմեանը, որ կարդաց Նորին Սրբութեան Հայրապետական Կոնդակը, զոր ներկաները ունկնդրեցին յոտնկայս: Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոսը ի մէջ այլոց կը գրէր. «. . . Իբրեւ Տիրոջ Սուրբ Սեղանի հաւատարիմ սպասոր, Դուք տարիներ շարունակ անսակարկ նուիրումով ծառայած էք Տիրախնամ Թեմի Սուրբ Վարդան եւ Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցիներուն՝ ազնիւ ջանքեր ներդնելով յանուն մեր եկեղեցու աստուածաշնորհ առաքելութեան իրականացման: Ամերիկահայ Մեր զաւակների ազգային եւ հոգեւոր կեանքի առաւել պայծառութեան նախանձախնդրութեամբ Դուք բազմաթիւ յանձնառութիւններ էք ստանձնել նաեւ Ազգային հաստատութիւններում եւ Ձեր կարողութիւններն ի սպաս բերել նրանց կողմից իրականացուող ձեռնարկներու յաջողութեանը: Ձեր նուիրումով, ազգօգուտ եւ եկեղեցաշէն գործերով Դուք Տիրոջ օրհնութիւնն էք վաստակում Ձեր անձի, Ձեր ընտանիքի եւ համայն մեր ժողովուրդի համար»:

Ապա, Թեմակալ Առաջնորդը Հրանդին եւ Ռուպիին կուրծքերը զարդարեց Ս. Ներսէս Շնորհալի նքանշանով:

Փակման աղօթքը արտասանեց Գերշ. Տ. Եղիշէ Արք. Կիզիրեան:

Հանդիսութեան աւարտին՝ բոլոր ներկաները շնորհաւորեցին Հրանդը եւ Ռուպին եւ նորանոր յաջողութիւններ մաղթեցին:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

## ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

Հունաստանում պաշտոնական այցով գտնվող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը եւ Հունահայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Խորեն աբեղա Առաքելյանը հոկտեմբերի 10-ին այցելեցին Հույն Ուղղափառ Եկեղեցու Սինոդ, ուր հանդիպում ունեցան Սինոդի ընդհանուր քարտուղար Գաբրիել եպիսկոպոսի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին երկու եկեղեցիների հարաբերությունների զարգացմանը եւ փոխգործակցության խորացմանն առնչվող մի շարք հարցեր, խաղաղության պահպանությանն ուղղված համատեղ գործակցության եւ հոգեւոր-կրթական հաստատությունների սաների փոխանակման ծրագրեր:

Նույն օրը Հովակիմ Սրբազանն ու Հայր Խորենն այցելեցին նաեւ Աթենքի եւ Համայն Հունաստանի արքեպիսկոպոս Հերոնիմոսին: Սրբազան Հայրը Հերոնիմոս արքեպիսկոպոսին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եղբայրական ողջույնները: Արքեպիսկոպոսն իր խոսքում նշեց, որ շատ բարձր է գնահատում երկու Եկեղեցիների փոխհարաբերությունները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ<br>ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br>ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սլովակիայի Գերագույն դատարանի նախագահ Շտեֆան Հարաբինի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Արման Մկրտումյանի, ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի եւ Սլովակիայի հայ համայնքի նախագահ Աշոտ Գրիգորյանի:

Ողջունելով հյուրերին՝ Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց երկու երկր-



Ստեֆան Հարբինը Մայր Աթոռում

ների դպրական կառույցների միջեւ ձեւավորած սերտ համագործակցության համար: Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը իր գնահատանքն ու օրհնությունը փոխանցեց Սլովակիայի իշխանություններին՝ Սլովակիայում ապրող հայորդիների նկատմամբ դրսեւորած բարյացակամ վերաբերմունքի համար: Վեհափառ Հայրապետը նաեւ ողջունեց Սլովակիայի իշխանությունների ցուցաբերած զորակցությունը հայ ժողովրդին եւ նրա վճռական կեցվածքը Հայոց ցեղասպանության ընդունման եւ դատապարտման հարցում:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ Հունգարիայի իշխանությունների կողմից սպա Ռամիլ Սաֆարովի՝ Ադրբեջանին արտահանձնման խնդրին: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետը նշեց, որ նման երեւույթները՝ իբրեւ ազգայնության քարոզչություն, համընդհանուր դատապարտության պետք է արժանանան, հակառակ դեպքում՝ ցավալի անդրադարձ կարող են ունենալ մարդկային կյանքում:

***

Հոկտեմբերի 11-ին Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Քյոլնի (Գերմանիա) Կաթոլիկ եւ Ավետարանական եկեղեցիների ուխտավորներին՝ գլխավորությամբ Փորցի Բողոքական եկեղեցու հոգեւոր հովիվ Կառլ Գյոփելի:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ Հայ Եկեղեցու հարաբերություններին Քույր եկեղեցիների եւ այլ քրիստոնեական հարանվանությունների հետ: Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց, որ հյուրերն ուխտագնացության վայր են ընտրել Հայաստանը՝ վստահություն հայտնելով, որ այն հնարավորություն պիտի ընձեռի լավագույնս ճանաչելու Հայ Առաքելական Եկեղեցին եւ հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային ժառանգությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 11-ից 17-ը Հունաստանի Կոս կղզում տեղի ունեցավ Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչների նախապատրաստական խորհրդակցություն, համանախագահությամբ Սասիմայի միտրոպոլիտ Գեննադիոսի (Տիեզերական Պատրիարքություն) եւ Միջագետքի միտրոպոլիտ Եվստաթիոս Մաթա Ռոհամի (Ասորի Ուղղափառ Եկեղեցի), ընդառաջ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 10-րդ համաժողովի, որը տեղի է ունենալու 2013 թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 9-ը Հարավային Կորեայի Բուսան քաղաքում:

Խորհրդակցությանը, որ հյուրընկալվել էր Կոստանդնուպոլսի Տիեզերական պատրիարքության Կոսի եւ Նիսիրոսի միտրոպոլիտության կողմից, մասնակցում էին 37 միտրոպոլիտներ, արքեպիսկոպոսներ եւ եպիսկոպոսներ, վարդապետներ եւ քահանաներ, ինչպես նաեւ աշխարհիկ աստվածաբաններ Ուղղափառ եւ Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիներից:

Խորհրդակցության ընթացքում լսվեցին բանախոսություններ Եկեղեցու հաղորդութենական միության, խաղաղության եւ մարդու իրավունքների, բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության եւ այլ թեմաներով, ինչպես նաեւ քննարկվեցին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 10-րդ համաժողովին առնչվող մի շարք կազմակերպչական հարցեր:

Հոկտեմբերի 13-ին ժողովականները նաեւ աղոթք բարձրացրին առ Աստված Երուսաղեմի Հայոց Թորգոմ պատրիարքի հոգու հանգստության համար:

Ժողովականները մասնակցեցին նաեւ Կոսի Սբ. Նիկողայոս տաճարում մատուցված պատարագին, այցելեցին եկեղեցական ծխեր եւ հանդիպումներ ունեցան հավատացյալների հետ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ խորհրդակցության ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում էր Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից մասնակցում էր Տիկին Սալբի Էսքեջյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՏԱԼԻԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հոկտեմբերի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իտալիայի Հանրապետության պաշտպանության նախարար, ծովակալ Ջիամպաոլո Դի Պաոլայի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Պաշտպանության փոխնախարար Դավիթ Տոնոյանի եւ ՀՀ ԶՈւ հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի:

Հանդիպմանը Բարի գալուստ մաղթելով հյուրերին համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց երկու երկրների պաշտպանության նախարարությունների միջեւ ձեւավորվող համագործակցությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նկատեց, որ հայ-իտալական դարավոր բարեկամությունն արտահայտվում է ոչ միայն պետական, այլեւ եկեղեցական մակարդակով, որի վկայությունն են Հայ Առաքելական եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների եղբայրական հարաբերությունները:



Իտալիայի պաշտպանության նախարարը Մայր Աթոռում

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ ՀՀ ԶՈՒ հոգեւոր հովվությանը: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ արձանագրեց, որ այսօր չորս տասնյակից ավելի եկեղեցականներ իրենց հոգեւոր ծառայությունն են բերում հայոց բանակում: Նորին Սրբությունը նաեւ նշեց, որ բանակի հոգեւոր սպասավորները պարբերաբար հնարավորություն են ունենում ծանոթանալու այլ երկրներում նույնանման կառույցների փորձառությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Իտալիայի պաշտպանության նախարարը խոսեցին նաեւ եկեղեցի-պետություն հարաբերությունների եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ «ՎԱՉԵ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Հոկտեմբերի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի ու մատենադարանի բարերարներ տեր եւ տիկին Վաչե եւ Թամար Մանուկյանների, տեղի ունեցավ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի բացումը:

Արարողությունը բացվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վանական խորհրդի նախագահ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի խոսքով, ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեց Մայր Աթոռի նորակառույց մատենադարանի օրհնության կարգը:

Արարողության ավարտին ներկաներին օրհնության իր խոսքը բերեց Վեհափառ Հայրապետը: «...Հիշարժան եւ տոնական է այս օրը Մայր Աթոռի համար: Եկավ բարի պահը, եւ մեր ժողովրդի առջեւ բացում ենք դռները «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի: Նորակառույց մատենադարանը, ինչպես տեսնում եք, գեղեցկակերտ եւ ոգեշնչ կառուցված՝ առանձին շուք է հաղորդում մեր նվիրական հնագույն Մայրավանքին: Հոգու եւ մտքի լուսավորության այս նոր կաճառը, ապահովված է լավագույն պայմաններով ու հնարավորություններով Մայր Աթոռի մեծաթիվ գրականության պահպանման եւ ուսումնասիրման համար, եւ համոզված ենք՝ նոր լիցք պիտի հաղորդի մեր հոգեւոր ու գիտա-մշակութային կյանքին:

Առաքյալը հորդորում է՝ «Թող ձեր սերը ավելի եւ ավելի առատանա գիտության եւ ամենայն իմաստության մեջ» (Փիլիպ. Ա.9): Դարերի ընթացքում մեր Սուրբ Եկեղեցին օրրան է եղել դպրության ու գիտության եւ Աստծո օրհնությամբ այսօր էլ իր առաքե-

նության ծիրում վառ է պահում իմացության ջահը՝ աղբյուրը հոգևոր այն զորության, որը բարեփոխում է մարդկային կյանքը, կերտում նրա առաջընթացն ու բարօրությունը: Այս առաքելությանն է կոչված Մայր Աթոռի նորակառույց Մատենադարանը, որը մեր կյանքում հավելելու է գիտության լույսը և հարստացնելու իմացության շտեմարանները, հավատքով ու քրիստոնեական ճանաչողությամբ զորացնելու է Մեր զավակներին, որպեսզի ամուր ու հաստատուն քայլերով ընթանան դեպի Աստված և իրենց մտքի ու հոգու արգասիքները ծառայեցնեն հոգևոր մեր կյանքի և մեր Հայրենիքի առաջընթացին: Մատենադարանի գործունեության այս հեռանկարը ուրախացնում և քաջալերություն է պարգևում մեր հոգիներին: Գոհություն Աստուծո, այսօր առավել պայծառ ու զորացած ենք տեսնում Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությունը, որ հավատքի լույսով և հայրենյաց սիրով առավել ամուր պիտի շարունակի շաղկապել ու միավորել ազգս հայոց:

Սիրելիներ, մատենադարանի այս հոյակերտ կառույցով մարմնավորված են եկեղեցասիրությունն ու ազգասիրությունը ազգային բարերարներ՝ տեր և տիկին Վաչե և Թամար Մանուկյանների: Մատենադարանը համալրում է բարեգործությունների այն շարքը, որ ազնիվ ու նվիրյալ բարերարները տարիներ շարունակ հանձն են առել նախանձախնդիր ու պատրաստակամ ոգով՝ նշանակալի ավանդ բերելով եկեղեցական և ազգային մեր կյանքին: Մեր գահակալության շրջանից մեծագնիվ բարերարները ամեն տարի իշխանավայել նվիրատվություն են կատարում ի նպաստ Մայր Աթոռի ծրագրերի: Նրանց սրտաբուխ ընծայաբերումներով նորոգվել են Մայր Աթոռի «Շողակաթ» հեռուստաընկերության և տպարանի շենքերը: Հոգու խնդությամբ ու գնահատանքով ենք անդրադառնում, որ ազգային բարերար տիար Վաչե Մանուկյանը ի հիշատակ իր հանգուցյալ հոր՝ Սուրբ Եղիշե եկեղեցին է պարգևել Լոնդոնի հայ համայնքին՝ ձեռք բերելով և նորոգելով անգլիկան եկեղեցու պատմական արժեքավոր շենքը: Ձեր վաստակը մեծ է, սիրելի բարերարներ: Կանգուն են Ձեր բարեպաշտության և բարի գործոց վկայությունները: Այսուհետ Մայրավանքում՝ Արարատի դիմաց, սերունդների համար դարեդար պիտի մնա Մատենադարանը, իսկ առաքյալը ասում է՝ «Եթե մեկի կառուցած գործը մնա, նա վարձ պիտի ստանա» (Ա. Կորնթ. Գ. 14):

Սիրելիներ, վերջին տարիներին Մայր Աթոռում իրագործվող այս ամբողջ բարեզարդությունը, մեծածավալ աշխատանքները, որոնք դեռևս ընթանում են, հնարավոր են դառնում մեր ժողովրդի բարերար զավակների շնորհիվ, նրանց առատաձեռն նվիրատվություններով: Դրանք վկայությունն են նրանց հավատքի, եկեղեցասիրության, Մայր Աթոռի հանդեպ որդիական սիրո և նախանձախնդրության, որոնցով բարեզարդվում ու պայծառանում է Մայր Աթոռը:

Երիցս գոհություն և փառք ենք բարձրացնում առ Տերը ազգիս պարգևած բոլոր բարիքների համար, որոնք վկայում են, որ Աստծո շնորհը մեզ հետ է և կշարունակի լինել հավատավոր, աստվածահաճո մեր գործերի ու նպատակների հետ՝ քաղցր պտուղներով ու բարի վաստակով արդյունավորելով մեր կյանքի ճանապարհը: Տիրոջ բարի կամքով ազատ ու անկախ մեր Հայրենիքում մեր Եկեղեցին զորանում է՝ վայելելով մեր ժողովր-



Ս. Էջմիածնի Մատենադարանի բացումը



Վաչէ եւ Թամար Մանուկեան Մատենադարան

դի հավատավոր զավակների սերը եւ հայրենի պետության ուշադիր վերաբերմունքը եւ բարյացակամ զորակցությունը, որի համար Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում հայրենի իշխանություններին՝ ի գլուխ Հայաստանի Հանրապետության նախագահ փիար Սերժ Սարգսյանի, ով այսօր իր ներկայությամբ պատվում է Մայր Աթոռի Մատենադարանի բացման հանդիսությունը եւ մասնակից է այս հիշարժան օրվա խնդությանը:

Գոհունակ սրտով վերստին մեր բարձր գնահատանքն ենք բերում մեծազնիվ տեր եւ տիկին Մանուկյաններին՝ իրենց նախանձավոր ոգու եւ սրտաբուխ բարերարությունների համար: Հայցում ենք Աստծո յոթնարփնյա շնորհները եւ ամենառատ օրհնությունները Մանուկյան ընտանիքին, մաղթում նոր ձեռքբերումներ, եկեղեցանվեր եւ ազգաշահ գործերին՝ հաջողություններ: Աստծուց օրհնյալ են ծնողները, որ մեծացրել ու կրթել են բարեպաշտ, ազգասեր եւ հայրենասեր արժանավոր զավակներ:

...Աղոթքով առ Աստված Քրիստոսահաստատ Սուրբ Էջմիածնի օրհնությունն ենք բերում ձեզ բոլորիդ, սիրելիներ, եւ համայն մեր ժողովրդին, որ ապրում է՝ հայացքը դեպի Արարատ ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Աղոթում ենք, որ Ողորմած Տերը խաղաղ եւ զորացյալ պահպանի մեր Հայրենիքը, օրհնի մեր ջանքերը շենացնելու մեր վանքերն ու եկեղեցիները, վերականգնելու մեր բոլոր սրբությունները, բարեզարդելու մեր կյանքը եւ այսօր ու միշտ ապրելու Իր պարգեւած փրկության շնորհով»,- ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ իր գնահատանքը հայտնելով նաեւ մատենադարանի ճարտարապետ Արտակ Ղուլյանին, «Սպիտակ կամար» շինարարական կազմակերպությանը (տնօրեն՝ Արագած Ախոյան) եւ մատենադարանի տարածքը բարեկարգողներին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնին մատուցած բացառիկ ծառայությունների համար Նորին Սրբությունը տիար Վաչե Մանուկյանին շնորհեց «Ասպետ Սուրբ Էջմիածնի» հայրապետական շքանշան:

Վերջում Նորին Սրբությունը, ՀՀ նախագահը, բարերար Մանուկյան ամուսինները եւ հյուրերը շրջայց կատարեցին մատենադարանի շենքում:

Արարողությանը ներկա էին նաեւ ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը, Մայր Աթոռի միաբաններն ու պաշտոնեությունը, 87-րդ ընդհանուր ժողովի առիթով Հայաստան ժամանած ՀԲԸՄ անդամներ եւ հյուրեր:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(18 հոկտեմբերի, 2012 թ.)

Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության
տիար Սերժ Սարգսյան,
Մեծազնիվ առաջին տիկին Ռիտա Սարգսյան,
Պատվարժան բարերարներ տեր եւ տիկին Վաչե եւ Թամար Մանուկյաններ,
Հարգարժան Վարչապետ տիար Տիգրան Սարգսյան,
Մեծահարգ Նախագահ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության տիար Պերճ Սեդրակյան,
Սիրելի հոգեւոր հայրեր եւ բարեպաշտ ժողովուրդ.

Հոգու անհուն խնդությամբ ենք ողջունում ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Հիշարժան եւ տոնական է այս օրը Մայր Աթոռի համար: Եկավ բարի պահը, եւ մեր ժողովրդի առջեւ բացում ենք դռները «Վաչե եւ Թամար Մանուկյան» Մատենադարանի: Նորակառույց Մատենադարանը, ինչպես տեսնում եք, գեղեցկակերտ եւ ոգեշնչող կառուցված՝ առանձին շուք է հաղորդում մեր նվիրական հնագույն Մայրավանքին: Հոգու եւ մտքի լուսավորության այս նոր կաճառը, ապահովված է լավագույն պայմաններով ու հնարավորություններով Մայր Աթոռի մեծաթիվ գրականության պահպանման եւ ուսումնասիրման համար, եւ համոզված ենք, նոր լիցք պիտի հաղորդի մեր հոգեւոր ու գիտամշակութային կյանքին:

Առաքյալը հորդորում է՝ «Թող ձեր սէրը աւելի եւ աւելի առատանայ գիտութեան եւ ամենայն իմաստութեան մէջ» (Փիլիպ. Ա. 9): Դարերի ընթացքում մեր Սուրբ Եկեղեցին օրրան է եղել դպրության ու գիտության եւ Աստծո օրհնությամբ այսօր էլ իր առաքելության ծիրում վառ է պահում իմացության ջահը՝ աղբյուրը հոգեւոր այն զորության, որը բարեփոխում է մարդկային կյանքը, կերտում նրա առաջընթացն ու բարօրությունը: Այս առաքելությանն է կոչված Մայր Աթոռի նորակառույց Մատենադարանը, որը մեր կյանքում հավելելու է գիտության լույսը եւ հարստացնելու իմացության շտեմարանները, հավատքով ու քրիստոնեական ճանաչողությամբ զորացնելու է Մեր զավակներին, որպեսզի ամուր ու հաստատուն քայլերով ընթանան դեպի Աստված եւ իրենց մտքի ու հոգու արգասիքները ծառայեցնեն հոգեւոր մեր կյանքի եւ մեր Հայրենիքի առաջընթացին: Մատենադարանի գործունեության այս հեռանկարը ուրախացնում եւ քաջալերություն է պարգեւում մեր հոգիներին: Գոհություն Աստուծո, այսօր առավել պայծառ ու զորացած ենք տեսնում Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությունը, որ հավատքի լուսով եւ հայրենյաց սիրով առավել ամուր պիտի շարունակի շաղկապել ու միավորել ազգս հայոց:

Սիրելիներ, Մատենադարանի այս հոյակերտ կառույցով մարմնավորված են եկեղեցասիրությունն ու ազգասիրությունը ազգային բարերարներ՝ տեր եւ տիկին Վաչե եւ

Թամար Մանուկյանների: Մատենադարանը համալրում է բարեգործությունների այն շարքը, որ ազնիվ ու նվիրյալ բարերարները տարիներ շարունակ հանձն են առել նախանձախնդիր ու պատրաստակամ ոգով՝ նշանակալի ավանդ բերելով եկեղեցական եւ ազգային մեր կյանքին: Մեր գահակալության շրջանից մեծազնիվ բարերարները ամեն տարի իշխանավայել նվիրատվություն են կատարում ի նպաստ Մայր Աթոռի ծրագրերի: Նրանց սրտաբուխընծայաբերումներով նորոգվել են Մայր Աթոռի «Շողակաթ» հեռուստարընկերության եւ տպարանի շենքերը: Հոգու խնդությամբ ու գնահատանքով ենք անդրադառնում, որ ազգային բարերար տիար Վաչե Մանուկյանը ի հիշատակ իր հանգուցյալ հոր՝ Սուրբ Եղիշե եկեղեցին է պարգեւել Լոնդոնի հայ համայնքին՝ ձեռք բերելով եւ նորոգելով Անգլիկան Եկեղեցու պատմական արժեքավոր շենքը: Ձեր վաստակը մեծ է, սիրելի բարերարներ: Կանգուն են Ձեր բարեպաշտության եւ բարի գործոց վկայությունները: Այսուհետ Մայրավանքում՝ Արարատի դիմաց, սերունդների համար դարեդար պիտի մնա Մատենադարանը, իսկ առաքյալը ասում է՝ «Եթէ մէկի կառուցած գործը մնայ, նա վարձ պիտի ստանայ» (Ա. Կորնթ. Գ. 14):

Սիրելիներ, վերջին տարիներին Մայր Աթոռում իրագործվող այս ամբողջ բարեզարդությունը, մեծածավալ աշխատանքները, որոնք դեռեւս ընթանում են, հնարավոր են դառնում մեր ժողովրդի բարերար զավակների շնորհիվ, նրանց առատաձեռն նվիրատվություններով: Դրանք վկայությունն են նրանց հավատքի, եկեղեցասիրության, Մայր Աթոռի հանդեպ որդիական սիրո եւ նախանձախնդրության, որոնցով բարեզարդվում ու պայծառանում է Մայր Աթոռը:

Երիցս գոհություն եւ փառք ենք բարձրացնում առ Տերը ազգիս պարգեւած բոլոր բարիքների համար, որոնք վկայում են, որ Աստծո շնորհը մեզ հետ է եւ կշարունակի լինել հավատավոր, աստվածահաճո մեր գործերի ու նպատակների հետ՝ քաղցր պտուղներով ու բարի վաստակով արդյունավորելով մեր կյանքի ճանապարհը: Տիրոջ բարի կամքով ազատ ու անկախ մեր Հայրենիքում մեր Եկեղեցին զորանում է՝ վայելելով մեր ժողովրդի հավատավոր զավակների սերը եւ հայրենի պետության ուշադիր վերաբերմունքը եւ բարյացակամ զորակցությունը, որի համար Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում հայրենի իշխանություններին՝ ի գլուխ Հայաստանի Հանրապետության Նախագահ տիար Սերժ Սարգսյանի, ով այսօր իր ներկայությամբ պատվում է Մայր Աթոռի Մատենադարանի բացման հանդիսությունը եւ մասնակից է այս հիշարժան օրվա խնդությանը:

Գոհունակ սրտով վերստին մեր բարձր գնահատանքն ենք բերում մեծազնիվ տեր եւ տիկին Մանուկյաններին՝ իրենց նախանձավոր ոգու եւ սրտաբուխ բարերարությունների համար: Հայցում ենք Աստծո յոթնարփյա շնորհները եւ ամենառատ օրհնությունները Մանուկյան ընտանիքին, մաղթում նոր ձեռքբերումներ, եկեղեցանվեր եւ ազգաշահ գործերին՝ հաջողություններ: Աստծուց օրհնյալ են ծնողները, որ մեծացրել ու կրթել են բարեպաշտ, ազգասեր եւ հայրենասեր արժանավոր զավակներ: Հայրապետական սիրով եւ օրհնությամբ ամենայն բարյաց մեր մաղթանքներն ենք հղում մեր բարերարների սիրեցյալ մայրերին՝ տիկին Սիրան Մանուկյանին եւ տիկին Անժել Կարայանին եւ աղոթք բարձրացնում լուսահոգի հայրերի՝ Եղիշե Մանուկյանի եւ Գառնիկ Կարայանի համար:

Հայրապետական Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում այս շքեղ եւ հոգեկերտ շենքի նախագծող ճարտարապետ փիար Արտակ Ղուլյանին, «Սպիտակ կամար» շինարարական կազմակերպության փնօրեն փիար Արագո Ախոյանին եւ բոլոր շինարարներին ու վարպետներին, նաեւ՝ փարածքը բարեկարգող «Պրոֆալ» կազմակերպության աշխատողներին, ովքեր հավատքով իրենց միտքն ու հոգին են ներդրել եւ ջանք չեն խնայել այս կառույցի համար:

Աղոթքով առ Աստված՝ Քրիստոսահաստատ Սուրբ Էջմիածնի օրհնությունն ենք բերում ձեզ բոլորիդ, սիրելիներ, եւ համայն մեր ժողովրդին, որ ապրում է հայացքը դեպի Արարատ ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Աղոթում ենք, որ Ողորմած Տերը խաղաղ եւ զորացյալ պահպանի մեր Հայրենիքը, օրհնի մեր ջանքերը շենացնելու մեր վանքերն ու եկեղեցիները, վերականգնելու մեր բոլոր սրբությունները, բարեզարդելու մեր կյանքը եւ այսօր ու միշտ ապրելու Իր պարգեւած փրկության շնորհով:

Թող Տիրոջ սերն ու շնորհները լինեն մեզ ամենքիս հետ այսօր եւ միշտ եւ հավիտյան: «Փառք եւ պատիւ եւ խաղաղութիւն ամենայնի, որ գործէ զբարի» (Հռոմ Բ. 10). ամեն:

## ԳԵՐՇ. Տ. ԱՐԻՍ ԱՐՔ. ՇԻՐՎԱՆԵԱՆ ԸՆՏՐՈՒԵՑԱՒ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ

Այսօր՝ Ուրբաթ, 19 Հոկտեմբեր, 2012-ին, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Միաբանական Ընդհանուր Ժողովը գումարեց իր ԻԱ. Նիստը: Ժողովին մասնակից էին 29 միաբան հայրեր՝ Երուսաղէմէն եւ արտասահմանի հայոց թեմերէն:

Ժողովը բացուեցաւ Հանգուցեալ աղօթքով Երուսաղէմի հոգելոյս Պատրիարք՝ Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանին հոգւոյն համար: Ժողովին օրակարգային հարցն էր ըստ Միաբանական Ուխտի 24-րդ կանոնի միանուն քուէով ընտրել Պատրիարքական Տեղապահ:

Միաբանական Ընդհանուր Ժողովը խաղաղ կերպով կատարեց Տեղապահի ընտրութիւնը, որուն որպէս արդիւնք Սրբոյ Աթոռոյս Էքումենիք եւ Արտաքին Յարաբերութեանց Վարիչ՝ Գերշ. Տ. Արիս Արք. Շիրվանեան, ձայներու ճնշող մեծամասնութեամբ, ընտրուեցաւ Պատրիար-քական Տեղապահ: Ժողովի աւարտին նորընտիր Տեղապահ Սրբազան Հայրը իր շնորհակալական խօսքն ուղղեց ժողովականներուն իրենց վստահութեան համար, ինչպէս նաեւ Պատրիարքական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Նուրհան Արք. Մանուկեանին:

Նորընտիր Տեղապահ Սրբազանը պէտք է նախագահէ հոգելոյս Պատրիարք Հօր յուղարկաւորութեան արարողութեանց:

Նորընտիր Տեղապահին պարտականութիւնն է նաեւ հոգելոյս Պատրիարքին մահուան քառասունքէն յետոյ ձեռնարկել նոր Պատրիարքի ընտրութեան:

ԴԻՒԱՆ Ս. ԱԹՈՌՈՅ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանում, տեղի ունեցավ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) 87-րդ ընդհանուր ժողովը:

Ժողովին ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանին, ՀԲԸՄ անդամներին ու պատգամավորներին հայրապետական իր օրհնությունը բերեց Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ուրախությամբ ողջունելով ժողովականներին Մայր Աթոռում՝ Վեհափառ Հայրապետը մասնավորապես ասաց. «... Փառք ենք մատուցում Տիրոջը, որ մեր նվիրական հոգևոր կենտրոնը ընդունում է ձեզ բարեզարդված և նոր հույսերով, որոնցում մեծ է նաև Բարեգործականի վաստակը: Արդարև, Բարեգործականը մշտապես զորակից է եղել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և Սուրբ Էջմիածնի առաքելությանը՝ արդյունավետ իրագործելու համար աշխարհասփյուռ հայության հոգևոր խնամքը և քաջարթուն, զորավոր ու պայծառ պահելու եկեղեցական ու ազգային մեր անդաստանը: Հոգևոր և ազգային մեր կյանքի բազում հոգսեր են հանձն առել և հաղթահարել Բարեգործականի անդամները, շատ խնդիրներ վճռել, առատ արգասիքներ ու հույս պարգևել մեր ժողովրդի զավակներին: Հայոց հոգևոր կենտրոնի ծրագրերի իրականացմանը Միությունը մասնակցել է ազնիվ ջանքերով, առատաձեռն սրտաբուխ նվիրատվություններով՝ վկայելով որդիական սերն ու հավատարմությունը Սուրբ Էջմիածնին»:

Նորին Սրբությունը գնահատանքով հիշատակեց, որ Միության շնորհիվ Հայրենիքում գործում են Հայորդյաց տները, Հայաստանի տարբեր քաղաքներում հաստատվել են բարեգործական ճաշարաններ, ՀԲԸՄ անդամների մեծազնիվ նվիրատվություններով վերաշինվում են եկեղեցիներ ու վանքեր, կառուցվում նորերը, նորոգվում են հոգևոր-կրթական հաստատությունները, նպաստ է բերվում եկեղեցականների նոր սերնդի պատրաստությանը, Միության ներդրումներով կյանք են առնում նաև Մայր Աթոռի բարեզարդման ծրագրերը, համայն հայության հոգևոր նվիրական կենտրոնի գործունեությունը լիարժեք ու հարմարավետ պայմաններում կազմակերպելու աշխատանքները: «...Մեր երախտագիտությունը՝ բոլոր նրանց, ովքեր իրենց ազնիվ նվիրաբերություններով նպաստ են բերել մեր Եկեղեցու առաքելությանը և նրա պայծառության սուրբ գործին: Հայրապետական Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում ամենքին, ովքեր ի սեր մեր Սուրբ Եկեղեցու և ազգային ու հայրենական կյանքի շենացման ազնվորեն ներդնում են իրենց ժամանակը, ջանքերը և հմտություններն ու կարողությունները: Այն ամեն ձեռքբերումներում ու հաջողություններում, որ արձանագրվել են անցնող հինգ տասնամյակներին Մայր Աթոռիս և մեր եկեղեցական կյանքում, վաստակի իր արժանի բաժինը ունի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը», - նշեց Վեհափառ Հայրապետը:

Վերստին ողջունելով ՀԲԸՄ անդամներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցանկացավ նրանց ազգաշահ ու եկեղեցանպաստ նոր իրագործումներ եւ արդյունաշատ աշխատանք՝ Մայր Աթոռում անցկացվող ՀԲԸՄ համագումարին: «Թող Տիրոջ մշտական օրհնության ներքո ապրի եւ գործի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը՝ իր եկեղեցասեր ու հայրենասեր նվիրյալ ու ազնիվ անդամներով»,- մաղթեց Վեհափառ Հայրապետը՝ աղոթելով, որ Երկնավոր Տերը խաղաղության մեջ պահպանի մեր Հայրենիքն ու համայն ժողովրդին եւ հանապազ օրհնի բոլոր ջանքերը՝ ի խնդիր ազգի, Հայրենիքի ու Եկեղեցու պայծառության:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅԱՆ ՍՐԱՀԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԱՄԲԱՐԱՆԻ ՀՈՂՕՐՀՆԵՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց մոմավառության սրահի եւ կաթողիկոսական դամբարանի հողօրհնեքի արարողություն:

Մինչ արարողությունը Միածնաէջ Մայր Տաճարում ձեռամբ Մեծ Բրիտանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանի մատուցվեց Ս. Պատարագ, որին ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության 87-րդ ընդհանուր ժողովի առիթով Հայաստան ժամանած Միության նախագահ Պերճ Սեդրակյանը, կենտրոնական վարչությունը, պատվիրակներ եւ բազում ուխտավորներ: Պատարագի ընթացքում կատարվեց հոգեհանգստյան արարողություն երջանկահիշատակ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Երուսաղեմի Հայոց Պատրիարք հոգելույս Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի, ՀԲԸՄ բարեհիշատակ նախագահների եւ Սիրիայում պատերազմական գործողությունների հետեւանքով զոհված հայորդիների հոգիների խաղաղության համար:

Այնուհետեւ հայրապետական թափորն ուղղվեց դեպի Մայր Տաճարի շրջափակում կառուցվելիք մոմավառության սրահի եւ կաթողիկոսաց դամբարանի վայրը, որտեղ, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց նոր կառույցի (ճարտարապետներ՝ Ասլան Միխիթարյան եւ Հայկ Մկրտչյան) հողօրհնեքի արարողությունը: Արարողության վերջում Նորին Սրբությունն իր օրհնությունը բերեց կառույցի բարերարներ պրն եւ տիկին Գառնիկ եւ Անի Յակուբյաններին (ԱՄՆ), որոնց ազնիվ հանձնառությամբ տարիներ առաջ կառուցվել է նաեւ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի նոր մասնաշենքը:

Ապա ներկաներն Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջնորդությամբ շրջայց



Աղավնատուն գյուղի Ս. Աննա եկեղեցին

կատարեցին Հին Վեհարանում՝ ծանոթանալով նորոգման աշխատանքների ընթացքին: Այս կապակցությամբ Նորին Սրբությունն իր բարձր գնահատանքը հայտնեց տեր և տիկին Պերճ և Վերա Սեդրակյաններին և Սեդրակյան ընտանիքին, որոնց սրտաբուխ նվիրատվություններով նորոգվում է Հին Վեհարանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԿԱՏԱՐՎԵՑ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 21-ին Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղում ձեռամբ Արմավիր թեմի առաջնորդ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի և մասնակցությամբ թեմի հոգևոր դասի կատարվեց նորակառույց Սուրբ Աննա վեհաշուք եկեղեցու օծման արարողություն:

Եկեղեցու օծմանը ներկա էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, եկեղեցու ազնիվ բարերար՝ մոսկվաբնակ Վահան Ավագյանը՝ իր ընտանիքի հետ, Ազգային ժողովի պատգամավորներ, համայնքապետ Աշոտ Գրիգորյանը, հարակից համայնքների ղեկավարները, բազմահազար համագյուղացիներ, թեմի եկեղեցասեր երիտասարդաց միությունների անդամներ և բազմաթիվ ուխտավորներ:

Նախորդ օրը՝ հոկտեմբերի 20-ին նախագահությամբ Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի կատարվել էր «Դռնբացէք» արարողությունը և օծվել էին եկեղեցու 12 սյուները:

Հոկտեմբերի 21-ին Սրբազան Հայրը Սրբալույս Մյուռոնով օծեց Սուրբ Սեղանը, Սուրբ Խորանի սյուները՝ չորս Ավետարանիչների անուններով, և Մկրտության ավազանը:

Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով բարերար Վահան Ավագյանն արժանացավ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու բարձրագույն ,Սուրբ Գրիգոր Լուսավորիչե պատվո շքանշանի:

Այնուհետև հյուրերը մասնակցեցին բարերարի կողմից կազմակերպած հյուրասիրությանը և տոնական միջոցառմանը:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ. Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 27-ին Միածնաէջ Մայր Տաճարում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ Հունգարիայում սպանված ՀՀ ԶՈւ սպա Գուրգեն

Մարգարյանի եւ 1999 թ. հոկտեմբերի 27-ին ոճրագործության հետեւանքով ՀՀ Ազգային ժողովում զոհվածների համար:

Արարողության ավարտին Գուրգեն Մարգարյանի ընտանիքին եւ ներկաներին իր խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ անդրադառնալով 1999 թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների հետեւանքով զոհված պետական այրերի եւ Հունգարիայում վայրագորեն սպանված լեյտենանտ Գուրգեն Մարգարյանի հիշատակին:

Նորին Սրբությունը հորդորեց ներկաներին իրենց աղոթքներում մշտապես հիշել նահատակ զավակներին, որպեսզի նրանց հիշատակն ու նվիրյալ ծառայությունը լույս դառնան հայոց կյանքի համար:

Վեհափառ Հայրապետը նաեւ Սուրբ Հոգու մխիթարությունը հայցեց Գուրգեն Մարգարյանի եւ զոհված հայոց պետական այրերի ընտանիքների համար՝ աղոթելով, որ Աստված Իր շնորհները հեղի նրանց կյանքի մեջ, եւ նրանք զոհված հարազատների տեսիլքով իրենց կյանքն արդյունավորեն հայրենիքի շինության ու պայծառության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նշանակումներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարբեր թեմերում:

Մայր Աթոռի միաբան Տ. Առեն վարդապետ Շահենյանը ծառայության է նշանակվել Գեղարքունյաց թեմում:

Տ. Հայրիկ աբեղա Հովհաննիսյանը, ազատվելով Ուկրաինայի հայոց թեմի Ղրիմի առաջնորդական փոխանորդի եւ Սուրբ Խաչ վանքի վանահոր պարտականություններից, նշանակվել է Շվեյցարիայի հայոց թեմում՝ որպես Ժնեւի եւ Լեմանի շրջանի Ս. Հակոբ եկեղեցու հոգեւոր հովիվ:

Մայր Աթոռի հյուրընկալ Տ. Մխիթար աբեղա Գրիգորյանը ծառայության է կոչվել Ուկրաինայի հայոց թեմում՝ որպես Ղրիմի առաջնորդական փոխանորդ եւ Սուրբ Խաչ վանքի վանահայր:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

*«ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ-ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆԻ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ*

Վաչե Սեմերճյանը (ԱՄՆ Արևմտյան թեմ)

*«ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ*

Տ. Ներսես ավ. քհն. Ներսեսյանը (Մեծ Բրիտանիայի թեմ)
Մարինե Ղազարյանը (Արարատյան Հայրապետական թեմ)

*ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ*

Ս. Հովհաննես եկեղեցին (Բրազիլիայի թեմ)
Լիվինկսթընի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին (ԱՄՆ Արևելյան թեմ)
Կարո Դերձակյանը (ԱՄՆ Արևելյան թեմ)
Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան կուսակցությունը (ԱՄՆ Արևմտյան թեմ)
ՀԲԸՄ Ասպետաց Համախմբումը (ԱՄՆ Արևմտյան թեմ)